

# Անցորդը

հեղինակ՝ Ռեյ Բրեդբերի

թարգմանիչ՝ Լևոն Անանյան

Նոյեմբերյան երեկոների աղամամութին քաղաքը լցնող խաղաղության, անդորրի մեջ մտնել, քայլել բետոննե անհարթ մայթերով և տրորել սալերի արանքներից ծլած խոտը, ձեռքերը գրպանները դրած քայլել լոռության միջով. ահա թե աշխարհում ինչն էր ամենից ավելի սիրում Լեռնահարդ Մինը. Սիրում էր կանզնել խաչմերուկում, նայել լուսնի լույսով ողողված փողոցներին, մտորելով, թե ուր գնա: Մի բան, որ եթե ճիշտը խոստովանենք, այնքան էլ էական չէր: Նա մենակ, կամ զրեթե մենակ էր 2052 թվականի այդ աշխարհում: Եվ, վերջապես, որոշելով, թե որ ուղղությամբ է գնալու, նա քայլում էր. ու սառած օդը, սիգարի ծխի նման քուլա-քուլա տարածվում էր նրա շրթունքներից:

Երբեմն շատ հեռուներն էր գնում նա և տուն էր վերադառնում միայն կեսզիշերին: Զննում էր տներն ու քոթեզները, և թվում էր նրան, թե քայլում է գերեզմանատան միջով, իսկ պատուհաններից նշմարվող լույսի թույլ շողերը նման էին լուսատուիկների կայծկլտող կրակներին: Երբեմն գորշ, խարուսիկ ստվերներն էին հայտնվում սենյակների ներսի պատերին, եթե միայն վարագույրները դեռ չէին քաշված, և կամ անորոշ շրջուններ էին լսվում տների բաց պատուհաններից, տներ, որոնք նման էին շիրմաքարերի:

Լեռնահարդ Միգը կանգ առավ, բարձրացրեց գլուխը, ականջ դրեց, նայեց շուրջը և շարունակեց ձանապարհը չեղու սալերի վրայով: Երեկոները զբոսանքի դուրս գալիս, վաղուց ի վեր, նա ողջամտորեն հագնում էր սպորտային մաշիկներ, հակառակ դեպքում նրան կհետապնդեր շների հաշոցը, կվառվեին լույսերը, պատուհաններում մարդկանց գլուխներ կհայտնվեին, և ամբողջ փողոցը զարմացած կնայեր նոյեմբերյան երեկոյի խավարում թաղված նրա միայնակ կերպարանքին:

Այդ երեկո նա քայլեց դեպի արևմուտք, դեպի անտեսանելի ծովը: Սառը օդը, որ կարծես սառցե բյուրեղիկներով էր հազեցված, կսկծացնում էր նրա քիթն ու թոքերն էր ծակոտում եղևուու ասեղներով: Նա հաճույքով էր լսում թափվող տերևների թույլ շրջունը իր փափուկ ներբանների տակ և հանդարտ ու անշտապ ինչ-որ բան էր սուլում մեղմորեն: Երբեմն կունում մի տերև էր վերցնում, հազվադեպ հանդիպող լապտերների լույսի տակ զննում էր տերևի շիղերը և շնչում նրա դառը բույրը:

— Հե՞յ, դո՞ւք,— նա ցածրաձայն դիմեց տներին:— Ի՞նչ են հաղորդում չորրորդ ալիքով: Իսկ յոթերորդո՞վ: Իններորդո՞վ: Դեպի ո՞ւր է սլանում կավեցը: Իսկ բլրակի վրա արդեն հայտնվե՞լ է նրան օգնության հասնող հեծելազորը:

Երկար ու դատարկ փողոցը լուս էր: Միայն նրա ստվերն էր սահում այդ փողոցով, ինչպես դաշտերի վրայով սահում է բազեի ստվերը: Եթե մարդ աչքերը փակի և քարանա տեղում, ապա ինքն իրեն կարող է պատկերացնել Արիզոնայի ձմեռային հողմակարոտ անապատում, որտեղ հազար մղոն շառավղով ոչ մի տնակ չկա: Իսկ այս փողոցները չորացած գետերի հուներ են:

— Իսկ հիմա՞,— հարցրեց նա տներին և նայեց ձեռքի ժամացույցին:— Արդեն ուշն անց կե՞ս է: ՄԻ ոյուժին սպանությունների ժամանա՞կը: Վիկտորինա՞ : Ռևյո՞ւ: Ծաղրածուի անկումը բեմի՞ց:

Սա ի՞նչ բան էր: Ծիծաղ լսվեց լուսնի տակ ձերմակին տվող տնից: Նա կանգ առավ, բայց այլևս ոչինչ չէր լսվում. շարունակեց քայլել. ոտքը դիպավ ձեղքված սալին, և նա հազիվ պահեց հավասարակշռությունը: Բետոնի մեջ առաջացած ձեղքից աձել էին խոտ ու ծաղկիների ցողուններ: Տասը տարի շարունակ նա օր ու գիշեր քայլել էր այստեղ, անցել էր հազարավոր մղոններ և ոչ ոքի չէր հանդիպել, ոչ մի մարդու չէր հանդիպել այդ ընթացքում: Նա մոտեցավ տերևներով ծածկված խաչմերուկին, որտեղ խաչվում էին քաղաքով անցնող երկու հիմնական մայրուղիները: Ցերեկն այստեղ աշխատում էին զազային կայանները: Աղմկում էր մեքենաների հազարանց ծովը: Խշշացող այդ հսկայական միջատները սողում էին աղբաբեզմությունը պես: Դուրս մղվող գազերի թույլ հոտ արձակելով, նրանք շտապում էին դեպի իրենց տները: Բայց գիշերով այս մայրուղիներն էլ էին նման ցամաքած գետերի. քարե հուն և շողացող լուսին:

Նա թեքվեց դեպի իր տունը տանող նրբանցքը: Մինչև տուն հասնելը մնացել էր մի թաղամաս, երբ հանկարծ անկյունից դուրս պրծած միայնակ մեքենան գրկեց նրան իր լապտերների լույսով: Նա կանգ առավ և, գիշերային թիթեռի պես լույսով հմայված, քայլեց մեքենայի կողմը:

Մետաղյա ձայնը հրամայեց.

— Կա՞նգ առեք, կա՞նգ առեք: Տեղից շշարժվե՞ք:

Նա քարացավ:

— Չեռքերդ վե՞ր:

— Բայց...— ասաց նա:

— Չեռքերդ վե՞ր: Հակառակ դեպքում՝ կկրակենք:

Իհարկե, դա ոստիկանությունն էր, բայց ի՞նչ հազվագյուտ, գրեթե անհավանական երևույթ է սա: Մոտ երեք միլիոնանց ազգաբնակչություն ունեցող քաղաքում մնացել է միայն մեկ ոստիկանական մեքենա: Դեռ անցյալ տարի, ընտրությունների ժամանակ ոստիկանական մեքենաները երեքից կրծատեցին մինչև մեկը: Հանցագործությունները գնալով ավելի էին նվազում, և մնացել էր այս միակ մեքենան, որը պլանում էր քաղաքի փողոցներով:

— Զեր անո՞ւնը,— հարցրեց ոստիկանական մեքենան մետաղե շշուկով:  
Պայծառ, աչք ծակող լույսի տակ նա չէր կարողանում տեսնել այնտեղ նստածներին:

— Լեռնհարդ Միդ, — պատասխանեց նա:

— Բա՛ րձր:

— Լեռնհարդ Միդ:

— Զբաղմո՞ւնք:

— Կարծում եմ, որ ինձ կարելի է գրող կոչել:

— Դա զբաղմունք չէ, — ասաց ոստիկանական մեքենան, կարծես ինքն իր հետ խոսելիս լիներ: Լույսը նրան գամել էր տեղում, և նա կանգնած էր անշարժ, գնդասեղով ամրացրած թիթեռնիկի պես:

— Ճիշտ է, — ասաց Լեռնհարդ Միդը: Տարիներ շարունակ նա չէր զբում այլևս: Ամսագրերն ու զրքերը վաղուց արդեն չին վաճառվում: «Ճիմա ամեն բան տեղի է ունենում երեկոները, շիրմաքարերի նմանվող տներում, — մտածում էր նա: — Այդ շիրմաքարերը ներսից աղոտ կերպով լուսավորված են հեռուստացույցների լույսով, այնտեղ մարդիկ են նստած, որոնք մեռելների են նման. մոխրագույն կամ բազմերանգ լույսերի ճառագայթները շոյում են նրանց դեմքերը, բայց երբեք չեն հուզում նրանց»:

— Դա զբաղմունք չէ, — կրկնեց շրջացող գրամոֆոնային ձայնը: — Այստեղ ի՞նչ եք անում:

— Զբոսնում եմ, — ասաց Լեռնհարդ Միդը:

— Զբոսնո՞ւմ եք:

— Այո՛, զբոսնում եմ, — ասաց նա անկաշկանդ, բայց դեմքը սարսոաց:

— Զբոսնո՞ւմ եք, ուղղակի զբոսնո՞ւմ եք, զբոսնո՞ւմ եք:

— Այո, սըր:

- Որտե՞ղ եք զբունում: Ինչո՞ւ եք զբունում:
- Որպեսզի մաքուր օդ շնչեմ, որպեսզի տեսնեմ...
- Չեր հասցե՞ն...
- Սուրբ Զեյմսի հարավային փողոց, տասնմեկ:
- Մի՞թե ձեր տանը օդ չկա: Դուք օդափոխման հարմարանք ունե՞ք:
- Այո՛:
- Իսկ ձեր տանը հեռուստացույցային էկրան կա՞:
- Չկա՛:
- Չկա՞,— լսվեց թույլ մի ճողոց, որը հնչեց որպես ինքնամեղադրանք:
- Նստե՛ք մեքենա:

Նա սեղմեց դռան բռնակը և նայեց մեքենայի ներսը: Դա մի փոքրիկ խուց էր: Մի փոքրիկ, մութ բանտախցիկ վանդակավոր պատուհանով: Պողպատահամ էր գալիս և կար ախտահանման հոտ:

Անառողջ մաքրության և մետաղի հոտն էր դա: Այնտեղ ոչ մի փափուկ բան չկար:

— Եթե դուք կին ունենայիք, որը կարողանար հաստատել ձեր ալիրին,— ասաց մետաղյա ձայնը:— Բայց...

— Դուք ինձ ո՞ւր եք տանելու:

Մեքենան երկմտեց, նրա կլեկտրական աշքերը կարծես յուրովի կարդում էին ինֆորմացիան:— Հետաղիմական տենդենցների հետազոտման հոգեբուժական կենտրոն:

Նա ներս մտավ: Դուռը փակվեց մեղմ շրիւկոցով: Աղոտ լապտերներով լուսավորելով ձանապարհը, մեքենան սահեց զիշերային փողոցներով:

Քիչ հետո նրանք անցան քաղաքում եղած միակ տան առջևով, որի պատուհանները ողողված էին կլեկտրական լույսերով: Ցուրտ խավարի մեջ ամեն մի պատուհանը դեղին և տաք մի քառակուսի էր:

— Դա իմ տունն է,— ասաց Լեռնհարդ Միդը:

Նրան ոչ ոք չպատասխանեց:

Մեքենան ալացավ դատարկ փողոցներով, այդ ցամաքած գետերի հուներով, իր ետևում թողնելով դատարկ մայթերով դատարկ փողոցները... Եվ այդ նոյեմբերյան ցուրտ զիշերվա մեջ չեր լսվում ոչ մի ձայն, և ոչ մի շարժում նկատելի չեր: